

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Սարուխանի համայնքապետարանի գլխավոր մասնագետի (2.3-3) համայնքային ծառայության թափուր պաշտոնն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու մասին

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության **Սարուխանի** համայնքապետարանի /այսուհետ՝ Համայնք/ ղեկավարը հայտարարում է մրցույթ Հայաստանի Հանրապետության՝ **Սարուխանի** համայնքապետարանի աշխատակազմի /այսուհետ՝ Աշխատակազմ/ հետևյալ համայնքային ծառայության թափուր պաշտոնն զբաղեցնելու համար.

Հայաստանի Հանրապետության Սարուխանի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետի (ծածկագիր 2.3-3).

Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է.

Գլխավոր մասնագետը.

- իր անմիջական ղեկավարի հանձնարարությամբ իրականացնել տեղական տնտեսական վերլուծություններ հետևյալ թեմաների շրջանակներում՝ տեղական համագործակցություն, ֆինանսների հասանելիություն, տնտեսության կառուցվածք, ենթակառուցվածքներ և ընթացակարգեր, մարդկային կապիտալ, արտաքին դիրքավորում և մարքեթինգ:
- Նպաստում է տնտեսական զարգացման ընդհանուր տեսլականի և նպատակների ձևակերպմանը, ինչպես նաև գործողությունների ու նախագծերի սահմանմանը:
- Ձեռնարկում է վերլուծություն տնտեսական և ձեռնարկատիրության զարգացման ուղղությունների բացահայտման նպատակով և մշակում ռազմավարություն՝ այդ հնարավորությունների հետագա զարգացման ուղղությամբ: կատարում է քարտուղարի հանձնարարությունները՝ ժամանակին և պատշաճ որակով
- Բացահայտում է տնտեսական զարգացման ծրագրերի և նախագծերի ֆինանսավորման տարբեր հնարավորություններ:
- իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

Գլխավոր մասնագետն ունի օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված այլ իրավունքներ և կրում է այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ:

Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է՝

-բարձրագույն կրթություն, համայնքային ծառայության կամ պետական ծառայության պաշտոններում առնվազն երկու տարվա ստաժ կամ վերջին երեք տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ, կամ վերջին ութ տարվա ընթացքում համայնքի ավագանու անդամի աշխատանքային գործունեության առնվազն երկու տարվա փորձ, կամ առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ մինչև 2018թ. հունվարի 1-ը համայնքային ծառայության , պետական և /կամ/ համայնքային կառավարման առնվազն մեկ տարվա աշխատանքայի ստաժ.

<<Համայնքային ծառայության մասին>>, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքների, աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

-ցուցաբերել գերազանց հաղորդակցման հմտություններ շահագրգիռ կողմերի հետ հաղորդակցվելիս, ներառյալ՝ գործարարների, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների և պետական համակարգի պաշտոնատար անձանց հետ աշխատելիս

-անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում

-համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն

-իր պաշտոնի անձնագրով նախատեսված դեպքում տիրապետի օտար լեզվի /լեզուների/.

Դիմող << քաղաքացիները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

1. գրավոր դիմում /տրվում է հանձնաժողովի անունով՝նշելով այն պաշտոնը, որին հավակնում է դիմողը/
2. համայնքային ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով այդ պաշտոնն զբաղեցնելու համար քաղաքացու մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետմանը ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի պատճենները:
3. հայտարարություն այն մասին, որ ինքը չի տառապում Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 15-ի N1801-Ն որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով, որը հանրային ծառայության նշանակման դեպքում կարող է խոչնդոտել ծառայողական պարտականությունների կատարմանն ու լիազորությունների կատարմանը.
4. հայտարարություն այն մասին, որ ինքը դատական կարգով չի ճանաչվել անգործունակ կամ սահմանափակ գործունակ
5. հայտարարություն համայնքային ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով պահանջվող օտար լեզվին /լեզուներին/ տիրապետելու մասին
6. օրենքի 12 հոդվածի <<ե>> կետի պահանջը բավարարելու նպատակով արական սեռի անձինք ներկայացնում են նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր և զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենները կամ համապատասխան տեղեկանք
7. մեկ լուսանկար 3X4 չափսի
8. անձնագրի պատճենը

<< քաղաքացին մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը հանձնում է անձամբ՝ներկայացնելով անձնագիրը:

Փաստաթղթերը ընդունվում են ամեն օր՝ ժամը 9.00-ից մինչև 13.00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից, Սարուխանի համայնքապետարանում: Դիմումների ընդունման վերջին ժամկետն է 2017 թվականի դեկտեմբերի 11-ը ժամը 13⁰⁰:

Մրցույթը կայանալու է 2017 թվականի դեկտեմբերի 25-ին, ժամը 12⁰⁰-ին:

Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները փաստաթղթեր հանձնելու, լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրին և հարցաշարերին ծանոթանալու համար կարող են դիմել համայնքապետարանի աշխատակազմ (հասցե՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ, Սարուխանի համայնքապետարանի աշխատակազմ, հեռ. 077538111):

ՀՀ Գեղարքունիքի մարզի

Սարուխան համայնքի ղեկավարի պաշտոնակատար Լ.Աբրահամյան

հեռ.077214000